№ 64 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 3 — 1897 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 3 № 64

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
կոպեկանչիւր բառին 2 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամ Ասլանեան և Բարսեղ Գաբրիէլեան Իւզբաշեանցներ և Յովհաննէս Ասլանեան Կուկուջանեանց ցաւօք սրտի յայտնելով իրանց բարեկամներին և ծանօթներին առաջինը իր ամուսնու, երկրորդը եղբօր և երրորդը իր փեսայ՝ առնական պատուաւոր քաղաքացի

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԻԻԶԲԱՇԵԱՆՑԻ

մահը, խնդրում են չնորհ բերել յուղարկաւորութեան, յունիսի 3-ին, երեքշաբթի, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից, Ֆրէյլինսկայա փողոց № 14, դէպի Վանքի մայր եկեղեցին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է արմատական միջոցներ ձեռք առնել. Թիւրքիա և Եւրոպա.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր խոշոր բարեգործութիւն. Քաղաքային ձայնաւորների ընտրութիւնը. Նամակ Ախալքալաքից. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բաղդի խաղեր.

ՊԷՏՔ Է ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՔ ԱՌՆԵԼ

—

„Մշակի“ այսօրվայ համարում տպված թղթակցութիւնը թէհրանից՝ հրէաների դէմ գործված քստմնելի բռնութիւնների մասին՝ այլ ևս ոչ մի կասկած չէ թողնում, որ մահմետական աշխարհը նորից սկսում է վարակվել այն սարսափելի ախտով, որ դարերով ներկել է մարդկութեան պատմութիւնը արեան վտակներով, կոծանել, աւերել է ամբողջ երկիրներ, ջնջել, սպառել է ամբողջ ժողովուրդներ և որի մասին սակայն, եւրոպական քաղաքակրթութիւնը յաւակնութիւն ունէր կարծելու, թէ նա այլ ևս անզօր է իր աւերիչ գործունէութիւնը ցոյց տալու: Այդ ախտը —կրօնական ֆանատիկոսութիւնն է, որով այսօր վառվել, բորբոքվել են մահմետական ժողովուրդները քրիստոնեայ և այլակրօն ազգերի դէմ և որը գնալով տարածվում է զանազան երկիրների նոյն իսկ միմեանց հակառակ ազանդաւոր մահմետականների մէջ: Եթէ Թիւրքիայում ինքն կառավարութիւնն էր, որ գրգռում էր ժողովրդի ֆանատիկոսութիւնը, Պարսկաստանում, ուր կառավարութիւնը ամենևին համամիտ և համերաշխ չէ այդ տեսակ յանցաւոր քաղաքականութեան, ինքն ժողովուրդը, ամբոխն է, որ արտայայտում է ֆանատիկոսութեան զգացումներ ու գործում նրանց ազդեցութեան տակ: Փոխադարձ անհամաձայնութիւնը, թշնամութիւնը, ատելութիւնը մի և նոյն երկրի ազգաբնակութեան զանազան տարրերի մէջ այնքան սատկանում են, որ սպառնում են արիւնահեղ, միջազգային ընդհարումներ առաջ բերել և խանդարել ոչ միայն այդ, այլ և հարևան երկիրների խաղաղութիւնը: Իսլամը նորից դուրս է բարձրացնում և առաջ քշում իր սկզբունքները. „մահ դեավուրներին“ աղաղակը թնդում է աւելի և աւելի սատիկ և եւրոպական քաղաքակրթութիւնը, գիտութիւնը, առաջադիմութիւնը անկարող են հանդիսանում կասեցնել բռնի ոյժի, սուրի և թունի աւերիչ գործունէութիւնը:

„Զսպեցէք գազանին, մի արձակէք նրա կապը, մինչև որ նա չը փոխի իր գազանային բնութիւնը“, ասաց 20 տարի առաջ մի եւրոպական հրապարակախօս: Իսլամը դրել, մնուցել է իր դաւանողների սրտում գազանային հակումներ դէպի այն բոլորը, ինչ որ հակաիսլամական է. մինչև որ այդ սրտից չը ջնջվի, չը քերվի և արմատախիլ չը լինի այդ հակումը, անկարելի է նրան թողնել ազատ, անկարելի է արձակել նրա կապը:

Եւ սակայն քաղաքակիրթ եւրոպան ոչ մի լուրջ միջոցի չը դիմեց մինչև այժմ գազանին զսպելու և նրա բնութիւնը փոխելու համար: Ընդհակառակը նա, վերջին տարիներս, աւելի նպաստեց գազանային հակումների բռնկման, աւելի նպաստեց մահմետական ամբոխի ֆանատիկոսութեան զգացումների բորբոքման: Եւրոպայի ցոյց տուած աջակցութիւնը Թիւրքիային՝ անբարոյականացնող և խրախուսիչ ազդեցութիւն գործեց զանազան երկիրների մահմետական ազգաբնակութեան վրա և խաղաղ, հանդարտ պարսկական ժողովուրդը սկսեց նոյնպէս գազանային հակումներ ցոյց տալ դէպի հայերը և հրէաները և հալածել նրանց, իբրև իր կրօնի թշնամիներին և այդ էլ այնպիսի սատկութեամբ, որ ինքն պարսից կառավարութիւնը վարանում է ազդու, իրական միջոցներ ձեռք առնել խռովարարների դէմ, երկիւղ կրելով որ խռովութիւնը համաճարակ կը դառնայ:

Թիւրքիայում անհնարին է դարձել քրիստոնեաների համար ապրելը. այդտեղ չը կայ ոչ մի ապահովութիւն նրանց կեանքի, դոյքի և պատուի համար: Պարսկաստանում, հակառակ հանգուցեալ Նասրէդդին Շահի մարդասէր քաղաքականութեան, հակառակ այժմեան կառավարութեան ջանքերին, ոչ միայն քրիստոնեաները, այլ և հրէաները ենթարկվում են հալածանքի: Աֆղանիստանում Էմիրը հրամայում է քշել իր երկրից հայերին: Քրիստոնեաների և այլակրօնների հալածանքը մահմետականների կողմից կարող է աւելի մեծ ծաւալ ստանալ, եթէ քաղաքակիրթ եւրոպան չը շտապի արմատական միջոցներ ձեռք առնել ընդհանուր ֆանատիկոսութեան բորբոքման առաջն առնելու և զսպելու համար:

ԹԻԻՐՔԻԱ ԵՒ ԵՒՐՈՊԱ

—

Պարիզի „Nord“ լրագիրը, որ ռուսաց կիսապաշտօնական օրգան է համարվում, ցոյց է տալիս որ Էդհէմ-փաշայի յաղթութիւնները իսկապէս մեծ բաներ չէին: Ցոյները սակաւաթիւ էին, ունէին զինուորական վատ կարգեր, և այդ պատճառով թողեցին Թեսալիան Թիւրքերի ձեռքում: Այդ հանգամանքը սակայն այնքան երես է տուել Թիւրքերին, որ նրանք մոռացել են չափ ու սահման և այժմ անձնապաստանութեամբ են խօսում Եւրոպայի հետ: Լրագիրն ասում է.

„Կ. Պոլսի քաղաքական գործիչները, որոնք սովոր էին խնամակալութեան, մինչև այժմ եւրոպական մեծ պետութիւնների հետ աւելի կակուղ էին և հեշտ համաձայնվող: Էդհէմ-փաշայի արշաւանքը, որ մի շարք յաղթութիւններ առաջացրեց գերխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ յոյները միջոցներ չունէին և պատրաստված չէին, այնքան բարձրացրել է Թիւրք մինիստրների գոռոզութիւնը, որ օսմանեան յիշատակագիրը, խօսելով հաշտութեան պայմանների մասին, մեծ պետութիւններին զարմանք պատճառեց: Բ. Դուռը մոռացաւ, որ Եւրոպան պահպանեց Թիւրքիան ամենամեծ աղէտից, թոյլ չը տալով որ Բալկանեան քրիստոնեաները ընդհանուր ապստամբութիւն յարուցանեն և Բալկանեան պետութիւնները մասնակցեն պատերազմին, և այժմ այնպիսի պահանջներ է անում, որոնք հակառակ են քրիստոնեայ պետութիւնների արժանապատուութեան և Թիւրքիայի վերաբերութեամբ բռնած քաղաքականութեան:

„Սուլթանի մինիստրները, պարզ է, մոռացել են որ Օսմանեան կայսրութեան և մեծ պետութիւնների մէջ գոյութիւն ունեցող բարեկամական և օրինաւոր յարաբերութիւնները դեռ չեն ցոյց տալիս, թէ Եւրոպան ճանաչում է Թիւրքիային իսկական անդամ եւրոպական մեծ ընտանիքի: Թէև իր աշխարհագրական դիրքի շնորհիւ Թիւրքիան համարվում է եւրոպական պետութիւն, բայց դա չէ խանգարում նրան ընդհանուր եւրոպական իրաւունքից դուրս մնալու: Սուլթանի մայրաքաղաքը գտնվում է Եւրոպայում և այդտեղ էլ Բ. Դուռը ունի մի քանի հողեր, բայց դա դեռ իրաւունք չէ տալիս Թիւրքիային համարել իրան եւրոպական պետութիւն: Դրա ամենալաւ ապացոյցն այն է, որ բոլոր եւրոպական պետութիւնների հպատակները Թիւրքիայում չէին ենթարկվում այդ երկրի օրէնքներին: Հէնց որ մի ամենափոքրիկ քրիստոնեայ ազգ ազատվում է Թիւրքայ լուծից, նա իսկոյն դառնում է Թիւրքիայի վերաբերմամբ մի պետութիւն, որի հպատակները ապահովված են դաշնագիրներով Թիւրքիայում: Քանի որ Թիւրքիան ունի Եւրոպայում մի ամենափոքրիկ կտոր հող, նա համարվում է այդ կտորի տէր, բայց հէնց որ նա կորցնում է իր սեփականութեան իրաւունքը որ և է պատճառով, դրա հետ զրկվում է այդ կորցրած սեփականութիւնը նորից վերադարձնելու իրաւունքից:

„Թիւրքիան կորցրեց Թեսալիան այն յաղթական պատերազմի պատճառով, որ սկսեց 1877 թուին Ազատարար կայսրը: Այդ նահանգը միացրած է Յունաստանին, որ մի փոքրիկ պետութիւն է և պատկանում է եւրոպական ընտանիքին: Ընդհանուր—եւրոպական իրաւունքի համաձայն, Թեսալիան նորից Թիւրքիային վերադարձնել անկարելի է: Քրիստոնեայ եւրոպական ժողովուրդը, որ միանգամից դուրս է պրծել Թիւրքիայի իշխանութեան տակից, նորից նրան վերադառնալ չէ կարող:

„Թիւրքիան չը պիտի մոռանայ թէ ինչ պատահեց 1876 թուի Թիւրք-սերբիական պատերազմից յետոյ, երբ Թիւրք մինիստրները հպարտացել էին Դերվիշ-փաշայի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՂԴԻ ԽԱՂԵՐ

II

«ԱՐՑՈՒՆԲԸ ԶՈՒԼՈՒՄ ԿԸ ԾՆԻ»

—Ախր երկու «մէյիդ» մէ խէտ, էս իմալ էղաւ. հալբաթ մեղաւոր եմ, Տէր մեղա քե, էրկու սեաւոր որբևերի մէջ տան մէջ. Աստուած դու բարին կատարես,—այսպէս էր խօսում նա ինքն իրան շատ անգամ:

Երբեմն նայելով իր շէն տան վրա, իր չորս կարիճ, առողջ որդիների վրա, կայտառ մեծ ու փոքր թոռների ուրախ կանչկռտոցը լսելով, ինքն իրան սիրտ էր տալիս, մխիթարում, աշխատում էր հեռացնել իր սրտից թախիծը, հեռացնել իրանից տխուր նախազգացումը: Այդ ժամանակ նրան թւում էր, թէ զուր է այդքան վշտանում, զուր է այդքան կասկածում, վախենում. աշխարհումս ով վիշտ չէ ունեցել, ով է անպայման բաղդաւոր եղել, ում դռնից դագաղ ներս չէ մտել, ով սիրելիների գերեզման չունի:

—Էլի փառք էղնի քե Աստուած, ես անարժան, մեղաւոր մարդ եմ. էսա շէն տուն, էսա սաղ սալամաթ տղէկներ, էնանց խօրատ մօրատ ճժեր զըմէն լէ քո խուվի տակ կապրեն, ես քեմէ ռազի եմ, Տէր. է նա արնակոլոլ բէմուրադներին լէ դու տուիր, դու տարար, հազար բերան փառքե, օղորմած Տէր, ասում էր նա, ապա նոյն օրը շտապ-շտապ գնում էր եկեղեցի, երկար, շատ երկար և ջերմեռանդ աղօթում էր, յետոյ ծունկ էր չոքում քահանայի առաջ:

—Տէրտէր, մեռնիմ քո աջուն, Աստուծոյ առաջ տրտունջ էնելը մեղք չէ:

—Մահացու մեղք է, ռէս, մահացու մեղք:

—Դէ թողութիւն տուր ձի, տէրտէր, ես մեղաւոր մարդ եմ:

Քահանան ասում էր «ողորմեսցին» ծերունու ալեզարդ գլխի վրա, և սա հանգստացած, խաղաղ հոգւով տուն էր գալիս, գոհ և ուրախ լինելու հաստատ վճռով: Այսպէս անց էր կենում մի երկու օր: Սակայն սև կապած երկու այրիներն իրանց վշտահար դէմքերով և միշտ արտասուագին աչքերով, որը մնացած չորս մանուկները, որոնք ամեն բոպէ չրջում էին նրա աչքի առաջ՝ դարձեալ ցաւերի, տխուր նախազգացումների մի անսպառ աղբիւր էին դառնում նրա համար. կնճիռները կրկին կուտակվում էին նրա ծեր ճակատին, սիրտը դարձեալ մթնում էր որպէս սև գիշեր, տխուր նախազգացումները կրկին պաշարում էին նրան և նա զգում էր այդ անխուսափելի նախազգացումից, որպէս չար հրեշտակից: Նա վախենում էր մանաւանդ այրիների սգից, և ի սրտէ ուզում էր, որ այդ երկու կանայք այլ ևս չը սգան, գաղտնի չարտասվեն. նա համոզված էր խորին կերպով, որ երբ տան մէջ պատահած դժբաղդութիւնից յետոյ արտասուքն անընդհատ շարունակվում է, երբ մարդ չէ ուզում խսլաւ հաշտվել իր նոր, թէկուզ, շատ ծանր վիճակի հետ, չէ կարողանում փառք տալ Աստուծուն, այդ նշան է, թէ այդ տանը նոր և աւելի մեծ դժբաղդութիւն է պատահելու, որ հին թշուառութեան արտասուքը նորի արտասուքին պիտի խառնվի: Նա այդ ժամանակ իր կասկածամտութիւնն ու երկիւղն էլ բացատրում էր հարսների անընդհատ սգով, մեղադրում էր նրանց իր սրտի խորքում, բայց ոչ ոքի ոչինչ չէր ասում, վախենում էր թշուառներին էլ աւելի վշտացնել: Մի անգամ վերջապէս, հոգեկան վերդովմունքի խիստ բոպէին արտասուք տեսնելով Ծաղիկի աչքերին, ասաց խաթուն Մարէին.

—Կնիկ, էսա Ծաղիկն ու Զիւնիկը չուն եվ տիլան, ընչի՞ բէղոիմութիւն կէնեն, աչքերն ամալ կայ... Ախր չէ՞ էս ա տուն տիսոսի, էս ճժեր մեղք են, Աստուած կը զայրանայ, աղէկ չէ, էնոնք չէն գինայ օր արցունքը զուլում կը ծնի:

—Քա մարդ, ես ինչ ընեմ, ինչ խոզ տամ գլխուս, ապա ես չեմ ասե, կտրած սրտին խրատն ինչ էնի, ասելով բան կէղնի, ուրախութիւնը սրտից տի բղխի:

Եւ Ծաղիկն ու Զիւնիկը տխուր ու վշտահար, նրանց աչքերը միշտ թաց մնաց, արտասուքը ռէսի տնից չը պակասեց, տխուր նախազգացումը չը թողեց ծերունուն, մինչև որ հասաւ այն սև տարին: Գարնանային պայծառ լուսաշաղ օրը մօտեցաւ երեկոյին. արևի լուսաւոր գունդը յետ քաշելով իր ոսկեայ ցնցուղները

յաղթութիւններով և մեծամիտ պահանջներ էին անում։ Այդ հպարտութեան պատճառով Թիւրքիան կորցրեց Բուլգարիան, Բոլգարիան, Սերբիան և Թեսալիան Եւրոպայում և կարող է—Ասիայում"։

Դայլի գլխին աւելացան կարդալ—ահա թէ ինչ անուն կարելի է տալ Եւրոպայի խրատներին...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ԽՈՇՈՐ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

—

Մայիսի 29-ին Թիֆլիսում վախճանվեց տոհմական պատուաւոր քաղաքացի Յարութիւն Գաբրիէլեան Խզբաչեանց, անզաւակ, որն իր ամբողջ կարողութիւնը, մօտ 60—70,000 ռուբլի (կանխիկ դրամով և անշարժ կալուածներով Թիֆլիսում, Գանձակում և Աքսթումանում), կտակել է Ներսիսեան ուսումնարանին և զանազան բարեգործական նպատակների համար։ Նօտարական կարգով հաստատած կտակի զօրութեամբ հանգուցեալը կտակակատարներ կարգելով պ.պ. Ներսէս Աթաբէգեանին, Սամսոն Յարութիւնեանցին և Սերգէյ Գափիեանցին, պարտաւորացրել է նրանց կատարել իր հետեւեալ կամքը.—1) տալ իր կալուածների արդիւնքից տարեկան—1,200 ռ. իր կնոջ և 300 ռուբլի իր եղբօրը. 2) տալ իր միւս եղբօրը միանուագ—2,000 ռուբլի, և իր աներձագ Դաւիթ Կուկուջանեանցի երկու աղջիկներին—3,000 ռ. 3) Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան—500 ռուբլի. 4) Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան—500 ռ. 5) Թիֆլիսի Հայուհեաց ընկերութեան—500 ռ. 6) Քահանաների ապահովութեան գանձարանին—500 ռ. 7) Դուշէթի գաւառի Ծինամձովարիանթ-կարի գիւղատնտեսական դպրոցին—2,000 ռ. 8) Մարդասէր հայր Իսան աւագ քահանայ Կրօնչատասկան բարեգործութեան պէտքերի համար—200 ռ., 8) Թիֆլիսի գիշերային ապաստարանին—200 ռ., 9) Կոյրերի Թիֆլիսի ուսումնարանին—200 ռ., 10) Ծխատէր գիւտ քահանայ Աղանեանցին—200 ռուբլի. 11) Այս նուէրները դուրս գալուց յետոյ մնացած բոլոր կարողութիւնը, մօտ 60,000 ռուբլի, տալ Ներսիսեան ուսումնարանին, պարտաւորացնելով հոգաբարձութեան դրա տոկոսով պահել չքաւոր աշակերտներ. 12) Թաղումը կատարել միանգամայն պարզ և համեստ կերպով, այն է միայն ծխական քահանայի մասնակցութեամբ, չը հրաւիրելով ոչ ուրիշ քահանաներ, ոչ երգեցիկ խումբ, ոչ համքարներ, չը սարքել քելեխ, չը ծախսել որ և է գումար ազգական կանանց սուգի շորեր հագցնելու համար և առհասարակ խոյս տալ որ և է աւելորդ և չնայալ ծախսերից։

Խուդադեանի կտակից յետոյ, Խզբաչեանցի կտակը, թէ իր նպատակով, թէ էութեամբ և թէ լայն մարդասիրական մտքով երկրորդ նշանաւոր կտակն է հանդիսանում վերջին տարիների մեր հասարակական բարեգործութեան պատմութեան մէջ։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԶԱՑՆԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

1897—1901 քառամեակի ձայնաւորների լրացուցիչ ընտրութիւնը տեղի ունեցաւ յունիսի 1-ին, Թիֆլիսի Ժողովարանի ամարային շինութեան մէջ։ Թէև քաղաքային վարչութիւնը ընտրութիւնների սկիզբը նշանակել էր առաւօտեան ժամը 8-ին, բայց Թիֆլիսի Նահանգապետի կարգադրութեամբ ընտրութիւնները սկսվեցին միայն ժամը 1-ին։ Այս անգամ չը կար այն իրարանցումը, ինչ որ նկատվում էր մայիսի 18-ին և նոյն իսկ ընտրողների թիւը զգալի կերպով նուազել էր։ Մինչդեռ մայիսի 18-ին ընտրողների թիւը մօտաւորապէս 1060 էր, այս անգամ հազիւ դրա կէսը կար, որովհետև ընտրութեան մասնակցեցին միայն 550 հոգի (588 ձայնի իրաւունքով)։ Այս անգամ դումայի հին կամ «Դվորցովայա» կուսակցութիւնը կարծես համաձայնութիւն էր կայացրել ընդդիմադիր կուսակցութեան հետ և մտցրել իր ցուցակի մէջ այնպիսի կանդիդատներ, որոնց մայիսի 18-ին սևացրել էր։ Այդ կօմպրոմիսի շնորհիւ ձայնաւորներ ընտրվեցին հին կուսակցութեան այն կանդիդատները, որոնք մայիսի 18-ին սևացել էին և որոնց ընտրութիւնը չատ էլ ցանկալի չէր, և այդպիսով հին դումայի մէջ տարիներից ի վեր բուն դրած կուսակցութիւնը, որ մայիսի 18-ին զօրեղ հարուած ստացաւ իր նշանաւոր թեկնածուներից մի քանիսի սևանալով, այս անգամ նորից ձեռք բերեց իր նախկին աջողութիւնը՝ այդ թեկնածուների վերընտրութեամբ։

Քուէարկութիւնը վերջացաւ երեկոյեան ժամը 9-ին և հետեւեալ արդիւնքը տուեց.

Ակօպով Ե. Մ. (363 սպիտակ 225 սև), Ալիբեկով Պ. Ի. (379—210), Բաբով Ա. Ս. (369—219), Բաբով Ե. Ս. (309—207), Բուդդանով-Բաղդասարով Ա. Ս. (297—291), Բուդդանով Ի. Ս. (338—248), Վեսելովզորով Բ. Պ. (312—277), Վեսելովզորով Մ. Ն. (315—273), Գրիկուրով Ն. Ա. (304—282), Եւանգուլով Ա. Բ. (333—255), Եղիազարով Վ. Ս. (300—287), Կանդուրալով Վ. Գ. (301—285), Կոլուբաևսկի Գ. Մ. (349—242), Լիսիցով Ս. Դ. (342—245), Մելիք-Նուբարով Ս. Գ. (311—277), Միրզոեվ Գ. Զ. (304—282), Միակեվիչ Ա. Ի. (307—282), Մուլին Տ. Ի. (308—282), Օգնոսումով Ա. Ի. (346—241), Պախոմով Վ. Ն. (335—261), Պոարով Ի. Ե. (334—257), Սերգէեվ Ա. Գ. (358—231), Սուլխանով Ի. Ա. (354—232), Թամամշեվ Ն. Ի. (322—266), Տէր-Աստուրով Գ. Բ. (352—235), Թումանով իշխ. Ն. Զ. (332—254), Շաղինով Ի. Ա. (384—208), Շերշենկո Ի. Ա. (346—239), Շեստակով Մ. Ս. (324—262)։

Ուրեմն ընտրվեցին 29 ձայնաւոր։ Միւս քուէարկվողները՝ թւով 36 հոգի, չանցան։

Մայիսի 18-ին, ինչպէս յայտնի է, ընտրվել էին 57 ձայնաւորներ, ուրեմն պէտք էր ընտրել դեռ 23 ձայնաւոր և 16 կանդիդատ, բայց որովհետև այդ ընտրութիւնից յետոյ 7 հոգի, վրացիներից, հրաժարվել էին ձայնաւորի կոչումից, ուստի յունիսի 1-ին պէտք էր ընտրել 30 ձայնաւոր և 16 կանդիդատ. սակայն, ինչպէս տեսնում ենք, ընտրվեցին միայն 29 ձայնաւոր, այնպէս որ դեռ պակաս են 1 ձայնաւոր և 16 կանդիդատ։

Ընտրված 79 հոգուց 55 հայեր են, 20 ռուսներ, 3 վրացի, 1 գերմանացի։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Մայիսի 20-ին

Մեծ արհաւիրքների այս երեք տարիների ընթացքում հայ գաղթականները երբէք այնպէս չէին հեղեղել Ախալքալաքն ու իր գաւառը, ինչպէս առաջ, Սասունի դիւցազնական մարտիրոսութիւնից անմիջապէս յետոյ, և ներկայումս։ Ճիշդ է, մինչև այժմ էլ դրանց թիւը քաղաքում և գաւառում հարիւրներով էր հաշւում, բայց դրանք եկել էին վերջին տարիների ընթացքում փոքրիկ խմբերով և սկզբնական օգնութիւն ստանալով Բարեգործական ընկերութեան տեղական վարչութիւնից և ժողովրդից, մեծ մասամբ գիւղացիներից, ցրվել են գաւառում կամ մնացել են քաղաքում և գործ ճարելով չեն ծանրացել ազգաբնակութեան վրա։ Սակայն թիւրքաց բարբարոս բէժիմի այդ բազմաթիւ զոհերի հոսանքը դէպի Ախալքալաք աւելի զգալի եղաւ այժմ։ Մայիսի 18-ին Ախալքալաք հասաւ ամեն բան կորցրած և իրանց ու մերձաւորների կեանքը ազատելու համար փախած գաղթականների մի մեծ խումբ, բաղկացած 17 ընտանիքներից կամ 177 հոգուց, մեծ մասամբ կանանցից ու երեխաներից, որոնցից մի 10 տարեկան աղջիկ գնդակահար թեով։ Բոլորը Վանի մօտ գտնվող Արճէշից և շրջակայ գիւղերից են։ Ահա մօտ մի տարի է, որ հեռացել են այնտեղից, բայց երկար ժամանակ մնացել են Ալաշկերտ և միայն մօտ մի ամիս առաջ աւերված երկրից ոտք են դրել մեր սահմանները։

Դրանք առայժմ մնում են փակված ուսումնարանների շինութեան մէջ։ Բարեգործական ընկերութեան վարչութեան անդամները իսկոյն այցելեցին այդ թշուառ տարագիրներին՝ հարկաւոր օգնութիւնը հասցնելու համար։ Նորից մեր առաջ բացվեց թափառելու սոսկալի տեսարանը այն վտարանդի ժողովրդի, որ ահա երեք տարի է չը գիտէ ուր թեքէ իր գլուխը Եւրոպայի անտարբերութեամբ խրախուսվող սրմարդի հաշածանքից։ Ցնցոտիներով ծածկված, կեղեքված, անաբեկված ու չարատանջ զոհերի մի համախմբումն է մեր տեսածը։ Ամեն հասակից էլ կայ, սկսած ծծկեր երեխայից մինչև ալեւորները, բոլորն էլ քաղցած։ Ուժասպառ եղած այդ թափառականների վշտագին հայեացքում կարդացվում է այնպիսի անվերջ տառապանք, այնպիսի անմռունչ յուսահատութիւն, որ ամենանազգայ մարդիկ անգամ չէին կարող անտարբեր վերաբերվել։ Չէր լսվում ոչ հառաչանք, ոչ հեծեծանք, ոչ աղերսանք։ Եւ ինչ կարող էին աւելացնել խօսքերը այն ցնցող իրականութեան վրա, որ արտայայտում էին նրանց փոս ընկած, մարած աչքերը, որ տեսել են այն բոլորի կորուստը, ինչ որ թանդ է մարդկային սրտի համար, նրանց այն գունատ, սեղմված շրթունքները, որ այնքան երկար, բայց անօգուտ կերպով օգնութեան են կանչում երկինքն ու մարդկանց...

Կողոպտված արհեստաւորներն ու հողագործները, հողի այդ մշտակայ աշխատաւորները, որ կերակրում էին թէ իրանց և թէ միլիոնաւոր հալածողներին, այժմ զրկված են հողից, ցանքներից, ընակարանից և ապրուստի այլ միջոցներից ու պարապմունք են որոնում իրանց ազգակից գիւղացի եղբայրների մէջ։ Դուք, գիւղացիներդ, աւելի լաւ կարող էք հասկանալ նրանց ճակատագրի ամբողջ դառնութիւնը. մանակից արէք նրանց ձեր գաւառային աշխատանքներին, հաց տուէք, սիրտ տուէք նրանց, որով ամենայն իրաւամբ կը վայելէք «բարերարի» անունը։

Ասեցինք, որ բոլորն էլ քաղցած էին, հաց էին ուզում, և ամենանազգայ մարդն անգամ չէր կարող անտարբեր վերաբերվել, բայց... մեզ մօտ էլ կան հանրածանօթ քուրմերից, որոնց, ինչպէս երևում է, միայն գերեզմանը պիտի չակէ։ Մինչ գործակալ քահանան, չը գիտենք բարոյական որ օրէնքով, ամօթ համարելով եկեղեցու հաղարներից մի քանի ռուբլի տալու այդ թշուառների քաղցը զէթ ցամաք հացով յագեցնելու, զանազան ձեռնտութիւնների հետևից էր ընկել գաղթականներին գիւղերը ուղարկելու և դրանով թէ գլխից ռազ անելու նրանց և թէ Վեհափառ Կաթողիկոսի գիւանատան կարգադրութիւնը պայծառապէս կատարելու,—սովատանջ երեխաները չէին կարողանում սպասել, հաց էին ուզում։ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը միջոցների դիմեց քաղցածներին իսկոյն կերակրելու և մի քանի օր նրանց ապրուստը ապահովելու, մինչև որ ուղարկվեն գիւղերը։ Բայց գործակալը չատալել էր այդ անագին ամբոխը ուղարկելու քաղաքի մօտ գտնվող Զանգուրա և Դելիսկա գիւղերը, որտեղ հազիւ մի գիշեր մնալուց յետոյ, սովամահ չը լինելու համար, միւս օրը նրանք կրկին վերադարձան քաղաք։ Շատ հասկանալի է. պարաքակոս գիւղացիք ուզեցել են օրինակ վերցնել քաղաքից... Նախ քան գիւղեր ուղարկելը պէտք էր դրանց մերկութիւնը ծածկել, անկողին տալ. գիւղացիները կարող կը լինեն նրանց օթեան և մասամբ պարապմունք տալ, բայց չոր և անկողին՝ երբէք։ Այդ պարտականութիւնը ամբողջովին ընկնում է քաղաքի վրա։ Մինչև այժմ մի մասն արդէն գնացել է գիւղերը, իսկ միւս մասը հաւանական է, որ մնայ քաղաքում։ Ցանկալի է, որ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը բուրդ առնէ և յանձնէ գաղթական կանանց, որ մանեն և «վանայ շալ» պատրաստեն վարչութեան արհեստանոցում։ Պէտք է լուրջ միջոցների դիմել այդ թշուառներին լայն և կանոնաւոր օգնութիւն հասցնելու։ Տեղական իշխանութիւնը Թիֆլիսից ստացել է ընդամենը 240 ռուբլի, որ պիտի բաժանվի միայն հին գաղթականներին։

Զ. Տ.-Գ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Մայիսի 29-ին

Մայիսի 27-ին, երեկոյեան ժամը 5-ին, ծանր և երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց 57 տարեկան հասակում Գանձակի նահանգական բժիշկ, իսկական պետական խորհրդա-

---

լեռների կատարներից՝ ծածկվեց հորիզոնի ետև. չառագոյն արևմուտքը գունատվեց. երեկոյեան աղջամուղջն իջաւ լեռների և դաշտերի վրա և չուտով համատարած խաւարի մէջ Բ. գիւղը հանգիստ քնեց օրվայ աշխատանքներից յետոյ անդէտ և երջանիկ։

Կէս գիշերը մօտ էր. յանկարծ գիւղը հիմնիվեր դղրդաց մի սարսափելի սրոտից, որ սասանեցուցիչ արձագանքներով գնաց կրկնվելու լեռներում ու ձորերում։ Հեղձեղ եկաւ, թէ դեռերն իրանց ընթացքը փոխեցին. ծովերը դուրս թափվեցան լեռնացած ալիքներով, թէ սարերը յանկարծ փուլ եկան դաշտացան. ան, մթագին ամպ էր, որ որոտաց, թէ երկինքը փուլ եկաւ. աշխարհը կործանեց. գետինը պատռվեց և սանդարամէտի դները դուրս հանեց, թէ մի անուելի կայծակ էր, որ հսկայական ձայնով ճայթեց Բ... գիւղի գլխին, և բիւրաւոր հրեղէն լեղուներով միանգամից հրդեհեց խրճիթներն ու խոտերի դէզերը,—այդ սկզբում ոչ ոք չիմացաւ. միայն երբ սոսկալի ձայներից խելագարութեան չափ սարսափած ընակիչները դուրս թափվեցան, իրանց գտան բոցերի և գնդակների մէջ։—Բիւրդերի մի ահագին բազմութիւն սրով և կրակով կործանում էր Բ... գիւղը՝ ընակիչներին առանց խորութեան սեռի և հասակի սրի ճարակ դարձնելով։ Դիտապաստ ընկածների ոռնոցը, մեռնողների վերջին սրտաճմլիկ հռնդիւնը, կենդանիների վայն ու ճիչը, կանանց ու երեխաների ողիորդում ձայները, գթութիւն հայցողների աղերսանքը լցրել էր ծխապատ շրջակայքը։

Անօրէնները թակեցին ոէսի դուռը, տղամարդիկ դուրս թափվեցան բակը, նրանց հետևից մնացած բոլոր բազմութիւնը։ Գիւղի հսկայական լուսաւորութիւնը, լսվող յուսահատական ձայները նրանց աչքի առաջ ամենայն ինչ պարզեց։ Ամենքը սարսափով բռնված մի քանի բոպէ կանգ առան լուռ, անմռունչ, իսկ երբ զբրան անաւար շրխկոցը կրկին և կրկին լսվելով նրանց հանեց չուարումից, կանայք ու երեխաները սարսափելի վայնասուն բարձրացրին։

—Բացէք, գոռում էին դրսից, թէ չէ...

—Ինչ էնենք ախօ, ասաց Սրբէն, դուռը կը ջարդեն։

—Բացէք, կարճ կերպով ասաց Ծերունին մահվան դատապարտվածի անվերկիւղութեամբ և ամբողջ ընտանիքի բաղդը ճակատագրին յանձնելով։

Երկուսը ահով մօտեցան և նիզը յետ քաշեցին. դրսի ճնշումից դուռը սասիկ շրխկաց և տասնեակ հրացաններ ճայթելով ծխով պատեցին ամենայն ինչ։ Վայրենիների մի կատաղի խումբ ներս խուժեց զարհուրելի աղաղակներով. այնուհետև թէ ինչ կատարվեց, խաւարն ու ծուխը արգելեցին տեսնել. լսվում էին միայն հոգի խլացնող, սրտաճմլիկ ձայներ. խաւարի մէջ գործում էր պողպատը։ Երբ բոցավառված խրճիթը լուսաւորեց բակը, մի զարհուրելի տեսարան բացվեց.—Ծերունու երկու որդիները, գնդակահար ընկած, մահուան տագնապի մէջ ոլորվում, կծկվում էին, գետնի վրա քաշ գալով. միւս երկուսը մի խումբ դաղանների սրերի մէջ դեռ պաշտպանվում էին... Էլի մի երկու բոպէ և նրանք էլ ընկան հոգեարքի հառաչանքներով։ Ծերունի ոէսն այդ քանը տեսաւ։ Մի օրօրոց՝ ճվճվացող մանուկը մէջը՝ օդի մէջ սոսկալի պտոյտներ գործելով՝ ընկաւ խրճիթի բոցերի մէջ. նրան հանելու համար հրդեհի մէջ ձգեց իրան ոէսի մեծ հարսը։ Փոքրիկ հինգ տարեկան Ցուսիկին ամից դուրս քաշելով մի անօրէն սրով կէս արեց։ Ծերունին այդ էլ տեսաւ. «Ինձ տուէք, ինձ մորթեցէք», պոռում էր նա. բայց անօրէնները նրան մոռացել էին։ Մի վայրկեան՝ երկար, չէկ ծամերից բռնած քաշ էր տալիս գեղեցիկ Շամամին, ոէսի կոյս թոռանը։ Մարէ Խաթունը կախվել էր Շամամի ձեռքից, բայց երբ անկարող եղաւ յետ քաշել զոհին, վազեց մի ահագին քար վերցրեց և սրահի թմբի վրա բարձրանալով՝ ուժգին թափով քրդի գլխին իջեցրեց, որն արիւնաշաղաղ, փշրված գանգով ընկաւ ոռնոցով. իսկ նրա ընկերը սրի մի հարուածով գետին տապալեց Խաթուն-Մարէին։ Ծերունին այդ էլ տեսաւ և այլ ևս ոչինչ չը տեսաւ. նրա ոտները դողդողացին, գլուխն երերաց, աչքերը մթնեցին և մի ծանր, երկար «ահխ» քաշելով գետին գլորվեց ուշաթափ։ Ամեն ինչ վերջացաւ... «Ֆլայի» սուրբ օջաղն էլ քրդերը քանդեցին...

Ա. Ահարոնեան

կան բժշկապետ Վ. Փ. Գաւրիլկոն։ 1864 թուից հանգուցեալը գործում էր բժշկական ասպարիզում, իսկ 1875 թուին նշանակվում է Գանձակի նահանգական բժշկի պաշտօնում. 1894 թ. յուլիսի 1-ից հանգուցեալը համարվում էր և պատուաւոր հաշտարար դատաւոր Գանձակի նահանգի դատաստանական մասում։ Քան և երկու տարուց աւելի լինելով Գանձակում, նա մի այնպիսի անուն թողեց, որը չատ քչերին կարող է վիճակվել. բաւիս բուն նշանակութեամբ նա բժիշկ էր և ծառայում էր իր բարձր կոչմանը։ Նա օր աւ գիշեր հանգստութիւն չունէր. որ ժամին և լինէր՝ իրան դիմողներին չէր բացասի, ինչպէս սովոր են անելու մեր մի կարգ բժիշկները։ Նա հարիւրաւոր խեղճ և անկարող մարդկանց օգնութեան է հասել առանց մի կոպէկ վարձատրութեան, նրա համար խարուսիկ չը կար—լինէր իրան դիմողը ռուս, թէ հայ և կամ թէ թուրք, բոլորին էլ համահաւասար էր ընդունում. ահա այդ էր պատճառը, որ այսօր յուղարկաւորութեանը ներկայ էր մեծ բազմութիւն անխտիր ամեն ազգից և դասակարգից. հայ հոգեւորականութիւնը ևս պատուել էր հանգուցեալին իր ներկայութեամբ։ Դագաղը եկեղեցուց դուրս տանելուց առաջ գիւմնազիայի կրօնուսոյց Վասաւրգով քահանան մի երկար դամբանականով՝ զգացված բացատրեց հանգուցեալի լաւ կողմերը։ Քահանան ի միջի այլոց յիշեց, որ նա 15 տարուց աւելի գիւմնազիայի բժիշկ է եղել և թէ մի այնպիսի ինամքով էր վերաբերվում դէպի աշակերտները, որպէս հարազատ հայրը՝ իր զաւակներին։ Դագաղի վրա զանազան հիւմնարկութիւնների և անձնաւորութիւնների կողմից 15-ից աւելի պսակներ էին դրել. ի միջի այլոց և Գանձակի հասարակութիւնից.

Ինչպէս լսեցինք, հանգուցեալի պաշտօնը առայժմ կատարում է նրա օգնականը՝ բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց, որը նոյնպէս վայելում է ընդհանուր համակրանք։

Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կայսրուհի Մարիա Ալէքսանդրօվնայի Կոյրերի խնամակալութեան Կովկասեան բաժնի վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Կիրակի, յունիսի 8-ին, ժամը 2-ին, Կովկասեան պ. կառավարչապետի պալատում պէտք է տեղի ունենայ Կոյրերի խնամատարութեան Կովկասեան բաժնի անդամների ընդհանուր ժողովը, որի պարապմունքի առարկաները լինելու են բաժնի 1895 և 1896 թուերի գործունէութեան հաշուեքննութիւնը և պաշտօնատար անձանց ընտրութիւնը»։

—

Վաղը, չորեքշաբթի, յունիսի 4-ին, Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակված է հանգուցեալ Յովհաննէս Խուդադեանի կտակի քննութիւնը և հաստատութիւնը։ Ինչպէս մեզ հաղորդում են, հանգուցեալի ազգականները թողել են կտակի դէմ վէճ սկսելու միտքը։

—

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը ներկայացրել է Թիֆլիսի նահանգապետին ուսումնարանական յանձնաժողովի զեկուցումը Թիֆլիսում միջնակարգ գիւղատնտեսական դպրոց հիմնելու մասին։ Այդ դպրոցի համար հարկաւոր գետինը տալիս է քաղաքը։

—

Պարոն Սուվորին վաղուց է Հերբուլէսեան սիւներին է հասցրել իր անհամութիւնները։ Իր «մեծ թերթի» մայիսի 27-ի համարում տպագրել է խսչոր տառերով «Հայկական ցոյց» և այդ վերնագրի տակ դրել է մի թղթակցութիւն Շուշուց։ Դրողը դարձեալ Ն. Ադին է, Սուվորինի կովկասեան ընդհանուր գործակալը, որ մերթ Բաղում, մերթ Շուշում պատմութիւններ է յօրինում մայրաքաղաքի մեծ թերթի համար, որին ռուս մամուլը վաղուց տուել է «Բարվանասարայ» անունը։ Բայց այդ ինչ ցոյց է։ Օ՛, կարդացէք և ծիծաղեցէք։ Թուրքերը մի ներկայացում էին տալիս, փողոցային մի սկանդալ տեղի ունեցաւ, և ահա դա համարվում է ցոյց պետութեան դէմ։ Այն սրատուչ համակրութիւնը, որ Սուվորին ցոյց է տալիս առհասարակ բոլոր թուրքերին, դեռ հասկանալի է. բայց ինչ իրաւունքով թուրքերի և հայերի մէջ տեղի ունեցած սկանդալը համարվում է հակապետական մի ցոյց հայերի կողմից,—այդ Սուվորինի իմաստութիւնը գիտէ։ Եթէ Նեվայի ափերում միակ հայրենասէր դառնալու տենչանքներով տանջվող հրապարակախօսը ուզում է երկու տարրերի—հայերի և թուրքերի հաւասարմութեան մասին վկայութիւն ունենալ, թող բորբոքված ուղեղի տէր մարդկանց հեքեաթներին չը հաւատայ, այլ նայէ պատմութեան։ Եօթանասուն տարի առաջ, 1826-ին, Շուշու շրջակայքում ահագին պատերազմ կար։ Կարդացէք, պ. Սուվորին, այդ ժամանակի պատմութիւնը և, եթէ կարող էք, ամաչեցէք, տեսնելով թէ ում էք հաւատարիմ հպատակ համարում և ում էք տալիս պետութեան հակառակ անուն։ Բայց ինչ ենք ասում։ Մի բոպէ ենթադրեցինք թէ Սուվորինի քարվանասարան փաստերի, պատմութեան հետ գործ կարող է ունենալ և մոռացանք, որ այդպիսի հրապարակախօսների միակ զէնքը անամօթ սըտախօսութիւնն է...

—

Ներսիսեան դպրոցի վարչութիւնը վերջապէս ձեռնարկեց նորոգելու Սօլդատսկի բաղարում գտնվող 21 կրպակների շինութիւնը, որտեղ մինչև վերջին տարին քանում էին երկաթագործներ և թիթեղագործներ։ Այդ նորոգութեամբ պէտք է լայնանայ փողոցը և կարգի բերվեն խանութները։ Նորոգութիւնը կատարվելու է կապալի միջոցով, ճարտարապետի հսկողութեամբ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկին մշակել է մի ծրագիր Կովկասում դպրոցական առանձին հարկ մտցնելու մասին։

—

Երգիչ Բեգլար Ամիրջանեան, որ այժմ հիւր է մեր քաղաքում, խնդրում է մեզ յայտնել, թէ նա չէ մասնակցում այն ներկայացման, որ տրվում է այս երեկոյ վրաց ազնուականութեան թատրոնում և թէ աֆիշներում և յայտարարութիւնների մէջ նրա մասնակցութեան մասին հրատարակած լուրը միանգամայն սխալ է։

—

Առաջիկայ ամառվայ ընթացքում երկրագործութեան մինիստրութեան հողաչափները պէտք է չափեն և ուսումնասիրեն Գանձակի գաւառի լեռնային այն արօտները, որոնք գտնվում են արքունական հողերի վրա։ Այդ արօտների թուումն են Գինալդաղ, Խաչքուլաղ, Դիզիւրա և նրանց կից եյլաղները։

—

Մեր թղթակիցը ՄԵԾ ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻՑ մեզ հաղորդում է հետեւեալը. «Ցիմնական թուականների պատերազմական հայ հերոսներից մինը, մեր գաւառին յայտնի կապիտան Ս. Վիրաբեան աւագիբէգցի, իր անզգուշութիւնից զնդակահարվելով, մահկանացուն կնքեց 90 տարեկան հասակում։ Պատկաւելի ծերունին մինչև վերջին բոպէն քաջարի, վաւրուռն, եռանդոտ երիտասարդի տպաւորութիւն էր թողնում. հանդիպելով նրան, խօսելով նրա հետ, ձեզ թւում էր որ դուք գործ ունէք մի այնպիսի հերոսի հետ, որ հէնց նոր վերադարձել է պատերազմի դաշտից դափնիներով։ Լեռնականների դէմ գործող բանակի մէջ հայի զինուորական տաղանդը փայլեցնելով՝ հասարակ ծագումից հասնում է կապիտանի աստիճանին. այնուհետև թողնելով ծառայութիւնը, ապրում է գիւղական շրջանում։ Նա ժողովրդի մարդ էր և իրան յատուկ բարեսրտութեամբ ամենին յարգելի։ Թաղման հանդիսին ներկայ էր ահագին բազմութիւն շրջակայ գիւղերից, որոնք չատպել էին վերջին յարգանքը մատուցանելու իրանց անկեղծ բարեկամին»։

—

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Հողագործ դասակարգը արդէն վերջացրել է իր ցանքը, սակայն անձրեւի չատ կարիք կայ՝ անմիջապէս ոռոգելու անջրդի հողաբաժինները, որոնց մակերեւոյթը արեւի տակ կարծրանում, քար է կըտրում խեղդելով իր մէջ հացահատիկների ծիլարձակումը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անգլիական «Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է յունիսի 2-ից, թէ Ռուսաստանը ըստ երեւոյթին սկսել է պաշտպան հանդիսանալ Հայաստանի քրիստոնեաներին։ Խորբերդի ռուսաց հիւպատոսը գնացել է Ակն տեղեկութիւններ ժողովելու նպատակով քաղաքի և նրա շրջակայ գիւղերի ողբալի վիճակի մասին և պէտք է հետազօտի և ուրիշ տեղեր։ Թիւրքիան միւս կողմից ուժեղացնում է իր զինուորական կազմը սահմանագլխի մօտ, առարկելով, որ դա հետեանք է Ռուսաստանի մեծ զինուորական ոյժ ունենալուն Կարսի և Բայազետի մօտ։

—

Անգլիական համայնքների ժողովի մայիսի 31-ի նիստին Սաեվենսօն հարց յարուցեց Խուսֆ Իզզանի սպանութեան գործի մասին, որին արտաքին գործերի մինիստրութեան քարտուղար Կերզօն պատասխանեց հետեւեալը.

«Կ Պոլսի անգլիական դեսպանը վերջին ամսում ներկայացրել է մի յիշատակագիր, որ նա ստացել է Անդրուսից. սակայն այդ յիշատակագրի մէջ ոչ մի ակնարկութիւն չը կայ այն բանի մասին, որ Աղերբէյջանի մութեսարիֆը և մի ուրիշ բարձր պաշտօնեայ փող են խնդրել իբրև փոխառութիւն նպաստող ֆոնդի դումարներից։ Դեսպանը դեռ մայիսի 13-ին յայտնել էր, որ տեղական դատարանը որոշում է կայացրել պատժել յանցաւորներին և ներկայացնել վերին ատեանի հաստատութեան. այժմ դեսպանը պէտք է հետեւի դատաստանական քննութեան։ Ինչ վերաբերում սպանվածի մօտ եղած փողերին՝ տեղական հիւպատոսը յայտնում է, որ կարողացել է գտնել միայն 20 լիրա։ Դեսպանը փողի մասին արել է առանձին առաջադրութիւն»։

—

Անգլիական համայնքների ժողովի յունիսի 3-ի նիստում (նոր տօմարով) տեղի ունեցաւ հետեւեալ հարցապնդումը։

Ֆլին. Արտաքին գործերի մինիստրութիւնը ինչ տեղեկութիւններ ունի այն առաջադրութիւնների հետեանքի մասին, որ անգլիական դեսպան Ֆիլիպ Կերրի արել էր Թեվֆիկ փաշային՝ Թօքատի կոտորածների վերաբերմամբ։ Ինչու մահմեդական յանցաւորները մինչև այժմ չեն ենթարկվել պատժի և ինչ միջոցներ են ձեռք առել եւրոպական կառավարութիւնները յանցաւորներին պատժելու համար։

Կերզօն. Թագուհու կառավարութեան դեսպանը հեռագրում է մեզ, որ նա ամեն օր ուղարկում է Թիւրքաց կառավարութեան առաջադրութիւններ այն բանի մասին, որ պաշտօնեաները մինչև այժմ դեռ չեն պատժված։ Մինիստրների խորհուրդը քննում է հարցը, բայց դեռ վճռական հետեանքի չէ հասել։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, մայիսի 17-ին

Երէկ, մայիսի 4/16-ին, մի խումբ կատաղած վայրենի պարսիկներ, «մոլլա Ռէյհանօլլա» անունով մի ինչ որ անլսան սէյիդի դրդմամբ, յարձակվելով տեղիս հրէաների թաղի վրա, սկսում են խեղճ և անպաշտպան հրէաներին սարսափելի տանջանքներով հալածել... Նրանց մաղերից բռնած փողոցների մէջ քաշտալով՝ ստիպում էին կամ մահմեդականութիւն ընդունել, կամ թէ, իրանց հին սովորութեան համեմատ, գլուխներն ածիլել և կուրծքին մի կարմիր կարմատան կարել, որպէս նշան «մուռատ և կեղտոտ» հրէութեան, որից ամեն մի հաւատացեալ մահմեդական պիտի խորշէ... Ինչ և է, այս գազանային գործողութիւնը երթալով, աւելի սուր կերպարանք էր ստանում, այնպէս որ կատաղութիւնից հարբած մահմեդական ամբոխը սկսում է մտնել մինչև անգամ տների խորքերը և այնտեղ անպատեւելով անօգնական կանանց և աղջկերանց, նրանց քարշ է տալիս փողոցը, հրամայելով՝ կամ ուրանալ իրանց օրէնքը և կամ իրանց վրա կարկատել կեղտոտութեան այդ կարմիր նշանը։ Այսպէսով 3,000 հոգի հրէաներից զրեթէ 1/3 մասը մահմեդականութիւն ընդունելով՝ կարողացաւ ազատ մնալ խուժանի կատաղի հարձակումից. իսկ կրօնափոխութեան դիմադրող մասը սարսափելի չարչարանքների և տանջանքների ենթարկվեց մինչև երեկոյ, երբ դեսպանատների միջամտութիւնը առ երեւոյթս խաղաղացրեց այդ անասնելի աղմուկը... Իսկ այս փոթորիկը խաղաղացնելու համար մեծ դեր խաղաց «London Society for promoting christianity amongst the Jews» ընկերութեան տեղիս ներկայացուցիչ Միրզա-Նուրուլլա ազնիւ երիտասարդը, որն այս լուրն առաջին պէս՝ դիմեց ամերիկական, անգլիական և հօլլանդական դեսպանատները և այնտեղ համոզեց, որ հաւաքական մի յայտագրով Շահից պահանջեն, որ խաղաղութիւնը վերահաստատելու միջոցներ գործ դրվեն։ Եւ այդ անելուց յետոյ ամեն մի դեսպանատուն իր կողմից քանի մի հոգի «զուլամներ» ուղարկեց, որպէս զի խաղաղութիւնը պահպանեն...

Դեսպանատների դիմումներից յետոյ հազիւ երեկոյեան ժամի 3-ին կառավարութիւնը մի քանի հոգի թափթփած ֆառաշներ և խուժանից առաւել կատաղի թուրք զինուորներ ուղարկեց այդ ալեկոծված թաղը խաղաղացնելու, միայն այն պայմանով, որ խռովարար սէյիդներին և մոլլաներին ձերբակալելու փորձ չը լինի։ Եւ միթէ կարող է ներկայ կառավարութիւնը այդպիսի մի յանդգնութիւն յանձն առնել, քանի որ նոյն իսկ իր պաշտօնեայ գնդապետները օրը ցերեկով հրապարակում ձեռնելու չափ ծեծվում են մի քանի հոգի հասարակ մոլլաներից, և կառավարութեան ծպտունն անգամ դուրս չէ գալիս... և միթէ կարող է ծպտուն հանել... քանի որ գիտէ թէ ինչ փոթորիկ կը բարձրանայ ձրիակեր, ծայլ մոլլաների և սէյիդների մէջ...

Առ այժմ դեսպանները կառավարութիւնից պահանջում են այդ օրվայ խռովարարապետ սէյիդի ձերբակալումը և քննութեան ենթարկելը. իսկ թէ այդ խնդրի մէջ, չնորհիւ ներկայ կառավարութեան վախկոտութեան, դեսպանները մինչև որ աստիճան աջողութիւն պիտի ունենան, այդ փորձը պիտի ցոյց տայ. իսկ մենք մեր կողմից ասում ենք, որ այդ աջողութիւնը երազական պէտք է համարել։

Թիւրքիայի վայրենութիւնների ու անլուր բարբարոսութիւնների ախտը վերջապէս իրան արժան՝ տեղիս մահմեդական եղբայրներին էլ վարակելով՝ իր արշաւանքի գոյութիւնը ցոյց տուեց այս տարի, նոյն իսկ Թաւրիզի և Նոր-Ջուղայի հայերի գլխին եկած փորձանքներով... մէկ օր Թաւրիզ, միւս օր Ջուղայ խեղճ հայերի վրա են յարձակվում. այսօր Թէհրանում, նոյն իսկ Շահի քթի տակ յարձակվում են հրէաների վրա. ինչպէս չը հաւատանք, որ վաղն էլ մեր տեղացի ցիրուցան եղած 300 ընտանիք հայերի վրա չը պիտի յարձակվեն և նոյն հալածանքներին չենթարկեն։

Թիւրքիայում նոյն իսկ կառավարութիւնը ինքն է սարքում և գործադրում պատահած խըժդժութիւնները, իր ձեռքում գործիք ունենալով ազէտ ամբոխը. իսկ այստեղ ժողովուրդն է, որ օգտվելով կառավարութեան թուլութիւնից կատարում է նոյն տեսակ անկարգութիւններ։ Կարծես թէ Պարսկաստանի առաջադիմութիւնն ու աջողութիւնը հանգուցեալ Նասրէդդին-Շահի հետ անհետացաւ։ Այսօր մոլլաներն են, որ կառավարութեան ամբողջութիւնը իրանց փոթրթոցի մէջ ծածկելով, ընթանում են իրանց ցանկացածի պէս։

Ժիւրիթէր

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բ. Դուռը, ըստ երեւոյթին, յոյս է տածում եթէ ոչ վերջնականապէս միացնել Թեսալիան Թիւրքիայի հետ, դնէ երկար ժամանակ մնալ այնտեղ։ «Times» լրագրի թղթակցի խօսքով, Բ. Դուռը ոչ միայն բազմաթիւ պաշտօնեաներ է նշանակում այնտեղ, այլ և դպրոցական վարժապետներ է ուղարկում։ Կ. Պոլսից և Թիւրքիայի ուրիշ տեղերից հասնում են այնտեղ թիւրքաց պաշտօնեաների հարեմները։ Մակեդոնիայից ևս բազմաթիւ թիւրքեր են գալիս և բնակութիւն են հաստատում Յունաստան փախած քրիստոնեաների հողերի վրա և բնակարաններում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մայիսի։ Արդարադատութեան մինիստր Մուրավիէվ, Նորին Մեծութեան հրամանով ուղևորվելով Սիբիր՝ այնտեղ դատաստանական նոր հիմնարկութիւններ բանալու համար, յանձնեց արդարադատութեան մինիստրութեան կառավարութիւնը գաղտնի խորհրդական Զավադսկուն։

Երէկ «Ալէքսանդրիա» ամարանոցի եկեղեցում, Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի և կայսերական Ընտանիքի անդամների ներկայութեամբ գոհացողական մաղթանք կատարվեց Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլաևնայի ծննդեան առիթով։

ՍԻՄՖԷՐՈՊՈԼ, 31 մայիսի։ Նահանգապետը տեղեկութիւն ստացաւ Բէրդիանսկում տեղի ունեցած դժբաղդութեան մասին։ Զրի տակ են մնացել ձկնորսների բնակավայրերը։ Շատերն են վնասված։

ԼՕՆԴՕՆ, 31 մայիսի։ «Morning Post» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են. «Կարծում են, որ խաղաղութեան պայմանների մասին տեղի ունենալի խորհրդակցութեան ժամանակ Տէվֆիկ-փաշա զատրաստականութիւն կը յայտնի հետեւալ զիջումներն անելու. Թիւրքիան թոյլատրում է Յունաստանին Թեսալիան բացի Պէնէից դէպի հիւսիս գտնվող շրջանը. սկզբունքով համաձայն է կապիտուլացիան պահպանել, բայց պահանջում է էկսպէրտներ նշանակել այդ հարցի առիթով. նոյնպէս համաձայն է, որ Յունաստանի ֆինանսական դրութիւնը քննվի համոզվելու համար, թէ որքան ընդունակ է նա վճարելու պատերազմական տուգանքը։

ՋԷԴԱ, 31 մայիսի։ Այստեղ ժանտախտ երեւալու մասին պաշտօնապէս յայտարարված է։

Կ. ՊՕԼԻՍ, 1 յունիսի։ Մայիսի 30-ին մինիստրների արտակարգ խորհուրդ կար. մայիսի 31-ին չորրորդ նիստ խաղաղութեան բանակցութիւնների վերաբերեալ, որից նշանաւոր վճիռներ են սպասում դեսպանական շրջաններում։ Ապա տեղի ունեցաւ դեսպանների խորհրդակցութիւն։

ԲԵՐԼԻՆ, 1 յունիսի։ Օդագնաց Բէլֆէրտ, մեքենապետ Կնաբբի ուղեկցութեամբ, բարձրացաւ օդապարիկով, որը զեկավար դործիք ունէր։ Երբ օդապարիկը հասաւ 1000 մետր բարձրութեան, մի զօրեղ պայթիւն տեղի ունեցաւ. նոյն վայրկենին, օդապարիկը վառվեց, զամբիւղը կորվեց օդապարիկի այրվող կեղեից և մեծ արագութեամբ ընկաւ դետին Տէմպէլհօֆի մօտ։ Երկու անձինքն ես մեռած գտնվեցին, ծանր վէրքերով մարմնի վրա։

ԿԱԼԿՈՒՏԱ, 1 յունիսի։ Այստեղ երկրաշարժ կար։ Վնասված են շինութիւններ։ Խավրիում տներ քանդվեցին։ Կէս գիշերին տեղի ունեցաւ երկրորդ, աւելի զօրեղ երկրաշարժ։ Քաղաքի մի քանի մասերում վնասված է համարիա իւրաքանչիւր տուն։ Ցաճարում քանդվեց աշտարակի մի մասը։ Ուրիշ եկեղեցիների և հասարակական շինութիւնների աշտարակները վնասված են։ Սպանված են 8 տեղացիներ, շատերը վիրաւորված են։ Եւրոպացիները չը վնասվեցին։ Բունդում և Բարդվալում երկրաշարժը նոյնպէս մեծ վնասներ հասցրեց։

ՊԱՐԻԶ, 2 յունիսի։ Յունիսի 1-ին, երբ նախագահը գնում էր Լօնշան՝ ձիարշաւը տեսնելու, ճանապարհին մի երիտասարդ մարդ սաբրճանակ արձակեց նախագահի վրա՝ ոչ օգի չը վիրաւորելով։ Քննութիւնից երևաց, որ նախագահի վրա ոչ թէ սաբրճանակ էին արձակել, այլ գցել էին թուջեայ մի խողովակ, որը լցված էր վառօդով և պայթեց նախագահի անցնելու ժամանակ։ Կարծում են, որ ֆօրի վրա յարձակվողը խելագար է։ Նա փախաւ պայթիւնի բօլէին և չը կարողացան բռնել նրան։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԼԱԳՕԴԵԽ, Գ. Գասպարեանց. Ձեր նամակը չենք տպագրում, միայն այն պատճառով, որ այդ վէճը «Մշակի» էջերում փակել ենք արդէն։

ԿԱՂԶՈՒԱՆ, Մ. Մ. Կարդացէք վերևի պատասխանը։ «Մշակի» բոլոր համարները կանոնաւոր ուղարկված են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։

Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ են անում մէզի, խրեարեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱԲԱՍԹՈՒՄԱՆ

տրվում են քնակարաններ 2—4—6 և 8 սենեակներից բաղկացած։ Հարցնել պայմանների մասին Գրիբոյեդովսկայա փողոց, տ. № 25։

(№ 64) 1—2

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ ՍՕՖԻԱ ԽԻԶԱՆԵԱՆ

Տեղափոխվեց Սերգիեվսկայա փողոց, տ. № 1. (Սօլօլակում)

(№ 36) 1—10

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Երեքշաբթի, յունիսի 3-ին

հայոց դերասանները կը ներկայացնեն

I

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ

Կատակերգութիւն 3 արար. հեղ. Յ. Պարոնեանի

II

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մօսկվայի կայսերական թատրօնի արտիստ պ. ԲԷԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԸ կը երգէ „Ա՛յ վարդ“ և „Լռեց ամպերը“։

Ճիշդ 9 ժամին վարագույրը կը բարձրանայ։

2—2

УЧИЛИЩЕ и ПАНСІОНЪ

КОЛЛ. АСЕСС. ИВ. З. ТЕРЪ СТЕПАНОВА

Готовитъ въ гимназіи и другія училища и на бухгалтера съ платою въ мѣсяцъ за ученіе отъ 5 р., пансіонъ отъ 15 р., бухгалтерію. отъ 25 р., Гроибоѣдовская, № 12.

2—5

ՔՈՒԹԱՅԻՍԻ հայոց եկեղեցու համար հարկաւոր է մի բարոյալի և քաղցրաձայն **ԴՊԻՐ**, ուստի ցանկացողները կարող են դիմել ինձ՝ Քութայիս, իրանց վերջնական որոշ պայմաններով։

Երէցփոխան՝

ԱՆՏՕՆ ԿՈՒՐՈՒԼԵԱՆՑ

կենտրոնական դրավաճառանոցում ծախվում են

Գէորգ քահանայ Մկրտումեանցի հրատարակութիւնները

ՂԱՅԹՄԱԶԱՆՑ ՄԻԲԵԼԸ	8 կ.
ԴՐՕՇԱԿ (Լիֆօրի)	8 կ.
ՄԻՍԻՕՆԱՐ ՎԷՅՍՏԵՐԻ ԿԵԱՆՔԸ	10 կ.

(№ 56) 5—5

ՅՈՒՆԻՍԻ 5-Ի Բացվելու են

Մ. Ա. ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՑԻ

(Ծնեալ Արղութեան)

Նախապատրաստական դասարաններ

որտեղ կարող են պատրաստվել երեխաներ աշնան քննութիւնների և վերաքննութիւնների համար։ Աշակերտների ընդունելութիւնը՝ մայիսի 26-ից, ամեն օր, ժամը 12—2, և կէսօրից յետոյ 5—7. Վօզնեսենսկայա փողոց, № 18։

(№ 61) 3—4

ԼԷՆՔՕՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ համար հարկաւոր է բարոյալի, քաղցրաձայն և մասնաւոր ձայնագրագէտ ԴՊԻՐ։ Նոյն եկեղեցու ծխական օրիորդական միջասեան դպրոցի հարկաւոր է ՑԷՆԶՈՎ ՎԱՐԺՈՒՀԻ։ Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեան իրանց վերջնական որոշ պայմաններով։

(№ 64) 1—4

Սանդուղտներ, պատշգամբներ, դարպասներ, ցանկապատներ եւ այլն

ՇԻՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

յանձն է առնում, չափաւոր գներով,

ԵԱՐԱԼՕՎ ԵՒ ԱԼԻԽԱՆՕՎ

ԻՆԺԵՆԵՐՆԵՐԻ գործարանը։ ԹԻՖԼԻՍ, Աղէքսանդրեան փողոց, կայարանի մօտ, սեփական տուն։ Տելէֆօն № 9. (№ 59) 3—5

Поступила въ продажу новая книга

В. ЛУНКЕВИЧА

СРЕДИ ЖИВОТНЫХЪ

Очеркъ изъ жизни животныхъ, для дѣтей старшаго возраста. Съ 50 рисунками въ текстѣ.

ЦѢНА 50 КОП.

Продается въ ТИФЛИСѢ, въ Центральномъ книжномъ магазинѣ и въ книжномъ магазинѣ Хиддекеля. 4—5

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, յունիսի 11/23-ին ԱՆԱՏՕԼԻԱ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ և այդպէս շաբաթական, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդաեանին, Սիոնի փող. նախկին Ադրուանու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիբեանինսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշինրոզերին։ (№ 16) 6—20

ամենադիմադրելի սառնամրրիկներուն դէմ

ԷՕԺԷՆԻԱՅԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերումնաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մաղերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և Բաչել (թուխ գէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անկատելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդագոյն գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՅԻՆ ԲԱԼԶԱՄ

(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արեւհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ

գլխի պօմադ Պէրուանական բալզամով եփած՝ մաղերը սնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽԽՈՒՆԶԱՅԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԴԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Ռիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ռիս-Գուտման), սև, չագանակագոյն և խարտեաչ։ Այդ ներկով ներկված մաղերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիկական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բագու։ (№ 26) 30—50

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Іюня 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.